Հունիսի 27-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկեց 19 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող Հայաստանի Հանարպետության Շիրակի մարզի Աշոցք գյուղի դպրոցի համար համակարգչային սարքավորումների ձեռքբերման, Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման համար բիտումի ներկրման, Հայաստանի Հանարպետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի տարածքում փակ լողավազանի կառուցման և Երևան քաղաքի «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի 1-ին մասնաշենքի վերանորոգման նախագծման ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող Հին Վեհարանի թանգարանի ներքին հարդարման, Երեմյան խցերի կահավորման և Հին Վեհարանի կահավորման ծրագրերը.

Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագիրը.

Ամերիկայի Հայ օնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետության առողջապահության Հանրապետական գիտաբժշկական գրադարանի 2-րդ հարկի շինվերանորոգման ծրագիրը.

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Դիլիջան» միջազգային դպրոցի տարածքում ֆուտբոլի դաշտի կառուցման ծրագիրը.

«Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակ-ներում «Արյան անվտանգության ազգային ծրագրի շրջանակերում միջոցառումների իրականացմանը նպաստող» ենթադրամաշնորհային ծրագիրը.

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող Հայաստանի Հանարպետության Շիրակի մարզի Վահրամաբերդ և Կապս համայնքների ներքին ջրային ցանցերի վերակառուցման ծրագրերը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաս-տանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Օգտագործված ցինկապատ խողովակների մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Արտենի համայնքին», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի Լճափ համայնքի միջնակարգ դպրոցում ջեռուցման համակարգի տեղադրում», «Կահույքի մատակարաում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանի Վարդաբլուր, Կուրթան, Ագարակ համայնքներին», «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Նիգավան համայնքում խմելու ջրի ներքին ցանցին միացնելու համար մեկ խորքային հորի հորատում», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի «Ձյունիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի մասնակի վերանորգում» և «Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների վերապատրաստում» ծրագրերը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: